Կարգապահական գործ թիվ ԿԳ-16001

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի օգոստոսի 11-ի թիվ 122-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ ԿԳ/81-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ նաև Խորհուրդ**), նախագահությամբ Պալատի խորհրդի անդամ Լիպարիտ Սիմոնյանի, մասնակցությամբ Պալատի խորհրդի անդամներ, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեջլումյանի, Լուսինե Սահակյանի, Կարապետ Աղաջանյանի, Տիգրան Խուրշուդյանի և Երվանդ Վարոսյանի,

Քարտուղարությամբ՝Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Լիանա Գրիգորյանի (փաստաբանական գործունեության թիվ 892 արտոնագիր) (**այսուհետ՝ նաև Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Սույն Կարգապահական վարույթը հարուցելու համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ալիկ Հրանտի Մարանջյանի (այսուհետ՝ Դիմող) 08.12.2015թ-ի դիմումը, որով խնդրել է փաստաբան Լիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և պատժել նրան:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>**

ՀՀ Փաստաբանների Պալատի նախագահի կողմից 08.01.2015թ-ի կայացվել է ՝ Փաստաբան Լիանա Գրիգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին թիվ 02-Ա/ԿԳ-16001 որոշումը, որի համաձայն որոշվել է.

1. Փաստաբան Լիանա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 892) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.7.2., 3.1.3. և 3.6.1. ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-16001):
2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Ալիկ Մարանջյանին

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- Կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.
- Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին , և փաստաբան Ռոբերտ Մարտիրոսյանին պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39[2] հոդվածով նախատեսված իրավունքները:

3. <u>Դիմողի և Պատասխանողի բացատրությունները..</u>

3.1. <u>Դիմողի բացատրությունները</u>

3.1.1 Դիմողը Պալատի նախագահին 08.12.2015թ-ին ուղղված դիմումով հայտնել է հետևյալը.

«Ձեր պալատի փաստաբան Լիանա Գրիգորյանին վճարել ենք 1000 ԱՄՆ դոլար քաղ. գործին մասնակցելու համար քաղ. գործի համարն է ԵԷԴ/0622/02/15: Փաստաբան Լիաննա Գրիգորյանը մեզ գրավոր պայմանագիր չի տվել, խաբել է մեզ, չի մասնակցել դատական նիստերին: Մենք եղել ենք անորոշության մեջ: Պարզվել է, որ դատավորը առանց մեր ներկայության 11.12.2015թ. կայացնելու է վճիռ: Անընդհատ փորձում ենք կապնվել փաստաբան Լ.Գրիգորյանի հետ, պարզելու, թե ինչու դատական նիստերին չի մասնակցել, վճարված գումարը և փաստաթղթերը հետ վերադարձնել, նա մեր զանգերին չի պատասխանում:

Դիմելու ենք համապատասխան մարմիններ նրա նկատմամբ քր. գործ հարուցելու:

Խնդրում եմ փաստաբան Լիաննա Գրիգորյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, պատժել նրան, որպեսզի սրանից հետո չչարաշահի մարդկանց վստահությունը»:

3.1.2. Ըստ կարգապահական գործ նախապատրաստողի 11.04.2016թ. եզրակացության Դիմողը բանավոր բացատրություն է տվել, այն մասին, որ իր և փաստաբան Լիանա Գրիգորյանի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել, վերջինս փաստաբանական ծառայությունների համար փոխանցման եղանակով վճարել է իր բարեկամուհին:

Կարգապահական գործը նախապատրաստողի կողմից Դիմողին առաջարկվել է տալ գրավոր բացատրություն, ինչպես նաև ներկայացնել՝ լիազորագրի պատճենը, ԵԷԴ/0622/02/15 քաղաքացիական գործով դատական նիստերի արձանագրությունների կրիչը, հեռախոսազանգերի քաղվածը: Ինչպես գրավոր բացատրությունը, այնպես էլ պահանջված նյութերը /փաստաթղթերը/ Դիմողի կողմից չի ներկայացվել:

3.1.3. 03.06.2016թ-ին տեղի ունեցած Խորհրդի նիստի ժամանակ Դիմողը ըստ էության պնդոց իր դիմումում հայտնած տվյալները, սակայն Խորհրդի անդամների հարցերին պատասխանելուց չկարողացավ պարզաբանել, թե փաստաբան Լիանա

Գրիգորյանը՝ իր, թե զարմուհու վերաբերյալ գործով, դատարանում որպես ներկայացուցիչ պետք է մասնակցեր, ինչպես նաև չկարողացավ նշել, թե 1000 ԱՄՆ դոլար գումարը ինչ կերպ է փոխանցվել Լիանա Գրիգորյանին:

Դիմողը նույն նիստի ժամանակ պարտավորվեց հաջորդ նիստին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Իր և զարմուհու վերաբերյալ քաղաքացիական գործերով Լիազորագրերի պատճենները,
- Արտերկրից 1000 ԱՄՆ դոլար գումար փոխանցվելու վերաբերյալ փաստաթղթեր,
- Փաստաբան Լիանա Գրիգորյանի հեռախոսհամարին իր կողմից կատարված հեռախոսազանգերի վերծանումները:

3.1.4. 13.04.2016թ. նշանակված խորհրդի նիստին պատշաճ ծանուցված լինելով Դիմողը չի ներկայացել և վերը նշված փաստաթղթերը չի ներկայացրել:

3.1.5. 11.08.2016թ-ի Խորհրդի նիստին պատշաճ ծանուցված լինելով Դիմողը չի ներկայացել և վերը նշված փաստաթղթերը չի ներկայացրել:

3.2 Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություններ չի ներկայացրել:

Պատասխանողը պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի նիստերի օրվա և ժամի մասին չի ներկայացել նիստերին և բացատրություններ չի տվել:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Մարիամ Ղուլյանը, ով 2016 թ. մարտի 11-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը , ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, սույն եզրակացությունը ներկայացվում է խորհրդի Պալատի խորհրդին:

Փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Պալատի խորհուրդը»:

5.Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ և գործում առկա փաստաթղթերի ցանկը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ Վարույթի կարգ) 15-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնի

համաձայն, ապացուցման ենթակա փաստեր են համարվում, ստորև վկայակոչված փաստերը:

1. Արդյոք Լիանա Գալստյանը ստանձնել է դիմողի շահերի պաշտպանությունը, արդյոք Պատասխանողին վճարվել է 1000 ԱՄՆ դոլար,

Սույն կարգապահական գործ նախապատրաստող անձի կողմից գործին datalex.am էլեկտրոնային կայքից կցվել է ԵԷԴ/0622/02/15 քաղաքացիական գործով տպված քաղվածը, որից երևում է, որ Դիմող Ալիկ Մարանջյանի ներկայացուցիչ նշված է Լիանա Գրիգորյանը, իսկ կայացված դատական ակտում նշված է, որ Լիանա Գրիգորյանը դիմում է ներկայացրել՝ գործի նյութերին ծանոթանալու և վստահորդի շահերը պատշաճ ներկայացնելու համար դատական նիստը հետաձգելու մասին:

2. Դիմողի կողմից չի ներկայացվել իր և զարմուհու վերաբերյալ քաղաքացիական գործերով Պատասխանողին տրված Լիազորագրերի պատճենները,
3. Դիմողի կողմից չի ներկայացվել արտերկրից 1000 ԱՄՆ դոլար գումար փոխանցվելու վերաբերյալ փաստաթղթեր,
4. Դիմողի կողմից ապացույցներ չեն ներկայացվել փաստաբան Լիանա Գրիգորյանի հեռախոսահամարին իր կողմից կատարված հեռախոսազանգերի վերծանումները:

<u>6.Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.08.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Պատասխանող Լիանա Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 24.10.2009թ. և 2009-2015թթ ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ և առկա է մեկ ընթացիկ վարույթ:

Փաստաբան Լիանա Գրիգորյանը սույն որոշումը կայացնելու ժամանակ կարգապահական տույժեր չունի:

<u>7.Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով Պատասխանողի բացատրությունը, հետազոտելով կարգապահական գործում առկա փաստաթղթերը և մյուս ապացույցներ, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Լիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.1.3 կետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը

Սույն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրմամբ և գնահատմամբ Պալատի խորհուրդը եկել է այն հետևության, որ առկա չեն ապացույցներ առ այն, որ Դիմողի կողմից Պատասխանողին վճարվել է 1000 ԱՄՆ դոլար գումար:

Նշված հանգամանքը հիմնավորվում է, այն հանգամանքով, որ նախ Դիմողը երբևէ չի նշել, թե ինքը անձամբ նշված գումարը տվել է Պատասխանողին, այլ նշել է <վճարել ենք> / Դիմումում/, <փոխանցման եղանակով վճարել է իր բարեկամուհին> /նախապատրաստողին տրված բանավոր բացատրությունում/ , <արտերկրից է ուղարկվել> /խորհրդի նիստի ժամանակ/, ինչպես նաև թեև պարտավորվել է ներկայացնել գումարի փոանցման փաստը հիմավորող ապացույցներ, սակայն չի ներկայացրել:

Հետևապես, Խորհուրդը եկել է այն հետևության, որ Պատասխանողին գումար վճարելու փաստը հիմնավորող ապացույցներ առկա չէն:

Կանոնագրքի 2.7.2. ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքերի ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Գործում առկա է միայն datalex.am էլեկտրոնային կայքից տպագրված ԵԷԴ/0622/02/15 քաղաքացիական գործի քաղվածը, որից երևում է, որ Դիմող Ալիկ Մարանջյանի ներկայացուցիչ նշված է Լիանա Գրիգորյանը, իսկ կայացված դատական ակտում նշված է, որ Լիանա Գրիգորյանը դիմում է ներկայացրել՝ գործի նյութերին ծանոթանալու և վստահորդի շահերը պատշաճ ներկայացնելու համար դատական նիստը հետաձգելու մասին:

Սակայն, Խորհրդին ներկայացված չեն ապացույցներ, նշված դիմումը ներկայացնելուց հետո Պատասխանողը պետ է շարունակեր ներկայացնել դատարանում Դիմողի շահերը, թե ոչ, առավել ևս, որ Դիմողը թեև պարտավորվել էր Խորհրդին ներկայացնել Պատասխանողին տրված լիազորագիրը, սակայն այն չներկայացրեց: Նման պայմաններում, Խորհուրդը եկավ այն հետևության, որ առկա չեն ապացույցներ, որ Պատասխանող փաստաբանը դատական նիստը հետաձգելուց և գործի նյուերին ծանոթանալուց հետո, պետք է շարունակեր իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը դատարանում:

Կանոնագրիքի 3.6.1. ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Դիմողի կողմից ապացույցներ չեն ներկայացվել փաստաբան Լիանա Գրիգորյանի հեռախոսհամարին կատարված անպատասխան հեռախոսազանգերի վերաբերյալ, որպիսի պայմաններում Պալատի խորհուրդը հաստատված չի կարող համարել այն փաստը, որ առկա է Կանոնագրիքի 3.6.1. ենթակետի:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 39-րդ հոդվածի, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի պահանջներով՝ Պալատի Խորհուրդը ,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լիանա Գրիգորյանի (փաստաբանական գործունեության թիվ 892 արտոնագիր) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3. և 3.6.1. ենթակետերի հիմքով հարուցված թիվ ԿԳ-16001 կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմող՝ Ալիկ Մարանջյանին և Պատասխանող՝ Լիանա Գրիգորյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Լիպարիտ Սիմոնյան**